**Արձանագրություն N 3**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Կնիքների և դրոշմակնիքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» ապրիլի 2016թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Աղավնի Բուդուղյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄհՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1.Տեղեկատվություն՝ ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.**

«Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ-ն, «ԱՏԱ» ՍՊԸ-ն, «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ.» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները: Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

<u>1-ին</u> չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՏԱ» ՍՊԸ-ին:

<u>2-րդ</u> չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ-ին:

1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ.» ՍՊԸ-ին:

2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. ապրիլի 15-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

3) ծանուցել 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. ապրիլի 15-ը ներառյալ ներկայացնել լրացուցիչ հիմնավորում չհիմնավորված ցածր գնային առաջարկ ներկայացնելու համար, մասնակցի ներկայացրած գինը ցածր է գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ. ապրիլի 19-ին, ժամը 10:00-ին:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Տոնականյան

Անդամներ՝

Աղավնի Բուդոյան

Սարգիս Արմենակյան

Արման Ղուկասյան

Անահիտ Ավագյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան